

ՄԵԶՆԻՑ Ո՞Վ Է ՄԵԾԸ

«Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ» (Մատթ. 18:1):

Հիսուս պզուց է, որ առաքյալների միջև վիճաբանություն է տեղի ունենում և ուզում է իմանալ, թե՛ ինչն՞, ինչի՞ համար և այդ մասին հարցնում է նրանց. *«Ճանապարհին իրար հետ ինչի՞ մասին էիք վիճում» (Մարկոս 9:32):* Առաքյալները լուում են, անհարմար են պզուց պատասխանել, քանի որ իրենցից մեծին որոշելը նույնքան անիմաստ էր, որքան որևէ մի մարդու դեռ չմեռած ժառանգությունը բաժանելը: Հիսուս գիտեր վեճի պատճառը, բայց ցանկանում էր, որ նրանք արտա- հայտվեն, ուստի կրկնում է Իր հարցը և առաքյալները, տեսնելով, որ անհնար է խուսափելը՝ խոստովանվում են, թե՛ *«Ճանապարհին իրար հետ վիճում էինք, թե ո՞վ է մեծը» (Մարկոս 9:33):* Հիսուս նրանց ասում է. *«Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկոս 9:34):*

Մեր Տերը ոչ միայն Մեծ եղավ, այլ նաև մեծության գաղափարը նոր իմաստով լցրեց: Մինչև իր ժամանակը մեծության չափանիշը ուժը և հարստությունն էր: Մեծությունը այն աստիճան նյութականացված էր, որ հին հայերենում նշանակում էր հարստություն: Աշխարհի մեծերը պաշտոնների վրա գտնվողներն ու իշխանավորներն են, որոնք իրենց ազահ, անապնիվ ու անարդար կյանքով վնասում են մարդկանց: Սա մեծության այլասերված ըմբռնումն էր, որը Հիսուս հիմնովին փոխեց և մի մանուկ վերցնելով ասաց. *«Ահա՛ իմ սիրած մեծությունը, անմեղ և միամիտ պարզություն. թե որ դուք էլ փոքրիկ երեխայի նման անմեղ ու միամիտ լինեք, Երկնքի Արքայությունում կլինեք մեծ... Հետևապես իպուր եք փնտրում նրան, ով պիտի Իմ փոխարեն ավագ լինի. ես ավագ չեմ կարգելու. ամենից փոքրն էլ մեծ է իմ աչքում, եթե նա մեծ է առաքինությամբ» (Մատթ. 18:4-6):*

Ինչպես բոլոր ժամանակներում, այսօր էլ մարդկանց մեջ առաջինը և ամենամեծը դառնալու ձգտումը կա: Այս պագումը բխում է եսասիրտ- թյունից: Հիսուս Ինքը լավագույն ձևով է աալիս այս բացատրությունը, *«Մեծարանք ընդունելու չեկա», «այլ ծառայելու»... «Ես ձեր մեջ մի սպասավորի պես եմ» (Ղուկ. 22:27)* ու այս խոսքերը հաստատեց Իր կենդանի օրինակով, երբ վերջին ընթրիքի ժամանակ ծնկի եկավ և լվաց Իր աշակերտների փոշոտ ոտքերը:

Աստծու հրաշքն է, որ աշխարհում կան անթիվ նվիրյալ, արդար, ապնիվ ու հավատքով մարդիկ, որոնք իրենց «ես»-ը մոռացած, «մենք»-ի գիտակցությամբ շարունակում են կատարել իրենց բարի գործերը՝ միմիայն Աստծու փառքի համար:

«Ժամանակին, մի կրիա խնդրում է արծվին, որ թեի վրա վերցնի իրեն ու միասին թռչեն կապույտ երկնքում:

Արծիվը կատարում է նրա խնդրանքը: Բարձունքների գովության մեջ թարմացած ու հարբած կրիան խնդրում է արծվից, որպեսզի իրեն ապաս թողնի, որ ինքն էլ թռչի: Արծիվը չկարողանալով դիմադրել կրիայի աղաչանքներին, բաց է թողնում նրան ու կրիան անհասանելի բարձունքներից ցած ընկնելով ջարդուփշուր է լինում ծայրերի վրա»:

Առակն ասում է, թե երբեք չպետք է դուրս գանք մեր բնական վիճակից ու փորձենք անել այն ինչը մեր ուժերից վեր է: Այսպիսիների համար կրիայի օրինակը թող լավ դաս լինի:

Քրիստոնյա լինել նշանակում է խոնարհ և համեստ լինել, սակայն իրական խոնարհությունը՝ ինքնաճանաչումն է:

Եթե մարդը ինքնիրեն քննի և ուշադրությամբ նայի իր շրջապատին, կհասկանա, որ շատ դեպքերում նույնիսկ անզոր է դիմադրել կենդանական աշխարհի կամ բնության անակնկալներին: Օրինակ, ո՞վ կարող ապատվել կայծակի հարվածից, անձրևների ողողումներից և կրակի տաքությունից:

«Ինքզինք ճանչնալե հետո մարդուն կմնա անկեղծորեն ըլլալ այն, ինչ որ է ընկերության մեջ», ասել է Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Աբբ. Գալուստյանը, - «Իշխանը իշխան պիտի ըլլա, ոչ թե իշխելու, հարստահարելու և գերելու համար, այլ կտոավարելու, տկարը պաշտպանելու, օրենքը ու արդարությունը տիրապետելու համար. այսինքն բառին ազնվագույն ստույգով՝ ծառայելու համար:... Խորքին մեջ խոնարհ ըլլալ այս կնշանակէ» «Աւագ Շարաթ, 1974»:

Ճշմարիտ քրիստոնյա լինելու և մնալու համար անհրաժեշտ է, որ բարի գործեր կատարենք, օգնենք կարոտյալներին ու խնամենք հիվանդներին: Որով, չսպասենք, որ նրանք խնդրեն մեզ կամ մեր դուռը թակեն, այլ մենք կամավոր կատարենք մեր խղճի պարտքը և Աստված անպայման պիտի հատուցի մեզ արվելիով: Ամեն: